ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բովանդակություն

Ներածական մաս 3 էջ

Տեղեկատվություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 4 – 11 էջեր

Արձանագրված այլ փաստեր 11 – 19 էջեր

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 137-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ոստիկանություն:
Հաշվեքննության առարկան	2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը :
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի մայիսի 19-ից մինչև հուլիսի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը :
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի առաջին եռամսյակում ՀՀ ոստիկանությունը ըստ ներկայացված հաշվետվության հավաքագրել է 6,559,136.5 հազ. դրամ բյուջետային եկամուտներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ոստիկանության կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողական

հազ. դրամ

Բյուջետային եկամուտների անվանում	**Հաշվետու ժամանակահատվածի ծրագրային ցուցանիշ**	**Հաշվետու ժամանակահատվածում ստացված եկամուտ**
Պետական տուրքեր	1,834,583.0	1,457,040.9
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	5,796.3	5,626.7
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների մուտքեր	2,078,774.6	3,232,073.0
ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքեր	397,881.8	1,860,929.9
ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման մուտքեր	4,000.0	3,156.1
Պետությանը պատճառած վնասի փոխհատուցումից մուտքեր	50.0	309.9
Ընդամենը	**4,321,085.7**	**6,559,136.5**

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կողմից հավաքագրվել է նախատեսվածից 2,238,050.8 հազ. դրամով ավելի եկամուտներ: Ծառայությունների մատուցման դիմաց նախատեսվածից ավելի եկամուտները պայմանավորված են պետական պահպանություն իրականացնող ստորաբաժանումների կողմից 917.9 մլն դրամ մուտքերի հավաքագրումով, որը ծրագրային ցուցանիշներով նախատեսված չէ, քանի որ 2021 թվականից պետք է դադարեցվեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից տվյալ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև ճանապարհային ոստիկանության կողմից ծառայությունների մասով ծրագրային ցուցանիշի շուրջ 500 մլն դրամ գերակատարումով:

Բացի այդ, էական՝ շուրջ 55%-ով գերակատարվել է ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար կիրառվող պատժամիջոցների մուտքերի ծրագրային ցուցանիշը:

2021 թվականի առաջին եռամսյակի համար ՀՀ ոստիկանությանը պետական բյուջեի ծրագրերով նախատեսվել է հատկացնել 14,966,372.7 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 15,025,797.6 հազ. դրամ, ֆինանսավորվել է 13,205,128.1 հազ. դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ոստիկանության 2021 թվականի առաջին եռամսյակի ֆինանսավորումը պետական բյուջեից

հազ. դրամ

Ծրագրային միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն				
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում	2,251,672.8	1,880,924.7	1,865,006.2	2,060,562.1
Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում	1,056,379.2	1,008,091.9	1,008,048.0	1,008,023.2
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	1,401,135.9	1,246,139.5	1,245,728.0	1,259,820.2
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում	2,785,277.5	2,178,096.0	2,177,812.2	2,503,605.7
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում	1,042.0	588.0	588.0	48,766.5
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում	490,580.8	412,854.0	412,684.2	435,003.2
Առողջապահական ծառայությունների տրամադրում	125,861.1	115,197.4	115,197.4	115,197.4

Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	5,811.4	-	-	5,291.1
Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար	6,226,236.6	6,100,836.0	6,093,086.7	6,140,441.7
ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	1,416.9	1,416.9	1,416.9	1,416.9
ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում	258,008.0	-	-	-
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	-	-	-	499.7
ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում	-	-	-	9,898.2
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում	-	-	-	-
Ոստիկանության բաժանմունքների շենքային պայմանների բավարարում	30,900.0	-	-	-
Ոստիկանության կրթական ծառայություններ				
Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն	230,169.9	153,446.6	153,446.6	153,446.6
Միջին մասնագիտական կրթության ծառայություն	96,862.8	64,575.2	64,575.2	64,575.3
Նախնական մասնագիտական կրթության ծառայություն	64,442.7	42,961.9	42,961.8	42,961.9
Ընդամենը	15,025,797.6	13,205,128.1	13,180,551.2	13,849,509.7

ՀՀ ոստիկանության 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսերի ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 13,180,551.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 87.7 %-ը:

2021 թվականին ՀՀ պետական բյուջեով ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումները խմբավորվել են երկու ծրագրերում:

«Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրով, որի 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 14,634,322.1 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 12,944,144.4 հազ.դրամ կամ ճշտված պլանի 88.5 %-ը, դրամարկղային ծախսը՝ 12,919,567.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 88.3 %-ը: Ծրագրի միջոցառումները տասնհինգն են.

- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառում, որի 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,251,672.8 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,880,924.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.5 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,865,006.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 82.8 %-ը: Միջոցառման համար սահմանված են ինը արդյունքի չափորոշիչներ, որից չորսը կատարվել են թերի:
- «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,056,379.2 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,008,091.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 95.4 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,008,048.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 95.4 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ:
- «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,401,135.9 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,246,139.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 88.9 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,245,728.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 88.9 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ, որից մեկը կատարվել է թերի:

- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,785,277.5 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 2,178,096.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 78.2 %-ը, դրամարկղային ծախսը կազմել է 2,177,812.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 78.2 %-ը: Միջոցառման համար սահմանված են տասնհինգ արդյունքի չափորոշիչներ, որից վեցը կատարվել են թերի:
- «Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,042.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 588.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 56.4 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ, որից մեկը կատարվել է թերի:
- «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 490,580.8 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 412,854.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 84.2 %-ը, դրամարկղային ծախսը՝ 412,684.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 84.1 %-ը: Միջոցառման համար սահմանված են տասնհինգ արդյունքի չափորոշիչներ, որից վեցը կատարվել են թերի:
- «Առողջապահական ծառայությունների տրամադրում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 125,861.1 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 115,197.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 91.5 %-ը: Միջոցառման համար սահմանված են հինգ արդյունքի չափորոշիչներ:
- «Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և

հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 5,811.4 հազ.դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ, որը կատարվել է թերի:

- «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 6,226,236.6 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 6,100,836.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.0 %-ը, դրամարկղային ծախսը՝ 6,093,086.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.9 %-ը: Միջոցառման համար սահմանված են տասնչորս արդյունքի չափորոշիչներ, որից վեցը կատարվել են թերի:
- «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ» միջոցառման կատարման առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,416.9 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 1,416.9 հազ. դրամ կամ ճշտված պլանը կատարվել է 100 %-ով: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:
- «ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 258,008.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված են ինը արդյունքի չափորոշիչներ:
- «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է

500.0 հազ. դրամ: Միջոցառման համար առաջին եռամսյակում ծախս չի նախատեսվել: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

- «ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 176,979.3 հազ. դրամ: 2021 թվականի առաջին եռամսյակում միջոցառման համար ծախս չի նախատեսվել: Միջոցառման համար սահմանված են չորս արդյունքի չափորոշիչներ:
- «ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 135,561.0 հազ. դրամ: 2021 թվականի առաջին եռամսյակում միջոցառման համար ծախս չի նախատեսվել: Միջոցառման համար սահմանված են չորս արդյունքի չափորոշիչներ:
- «Ոստիկանության բաժանմունքների շենքային պայմանների բավարարում» միջոցառման կատարման առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 30,900.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ:

«Ոստիկանության կրթական ծառայություններ» ծրագրով, որի 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 391,475.5 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 260.983.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 66.7 %-ը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

- «Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 230,169.9 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 153,446.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 66.7 %-ը: Միջոցառման համար սահմանված են յոթ արդյունքի չափորոշիչներ, որից մեկը կատարվել է թերի:
- «Միջին մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել

է 96,862.8 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 64,575.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 66.7 %-ը: Միջոցառման համար սահմանված են չորս արդյունքի չափորոշիչներ, որից մեկը կատարվել է թերի:

- «Նախնական մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 64,442.7 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 42,961.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 66.7 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ, որից մեկը կատարվել է թերի:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մեթոդական ցուցումներով ՀՀ ոստիկանության 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթ է նախատեսվել 7,747,855.9 հազ. դրամ, որը ապահովելու համար հաշվեքննության են ենթարկվել պետական բյուջեի ծրագրերի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը՝

1. «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր՝ 5,860,038.6 հազ. դրամ,
2. «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» և «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառումների շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր՝ 2,202,496.0 հազ. դրամ,

3. «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր՝ 408,984.7 հազ. դրամ,

4. առանձին միջոցառումների շրջանակում ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների գնման համար կնքված 6 պայմանագրեր, որոնցով 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված ծախսերը գումարային կազմել են 133,157.8 հազ. դրամ:

Ընդհամենը հաշվեքննության են ենթարկվել ՀՀ ոստիկանության կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված 8,604,677.1 հազ. դրամի ծախսերը:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ոստիկանության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն:

ՀՀ ոստիկանության «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» (միջոցառում 1), «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» (միջոցառում 2), «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» (միջոցառում 3) և «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» (միջոցառում 4) բյուջետային ծրագրային միջոցառումներով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակներից համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է 174 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ որում, ընտրության

արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ ոստիկանության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	Միջոցառում 1		Միջոցառումներ 2 և 3		Միջոցառում 4	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Գլխավոր խումբ	2	2	1	1	1	1
Ավագ խումբ	6	6	0	1	1	1
Միջին խումբ	38	38	2	2	1	1
Կրտսեր խումբ	59	59	28	28	1	1
Քաղ. հատուկ ծառայող	1	1	0	0	6	6
Քաղ. աշխատանք կատարող և տեխ. սպասարկող	6	6	19	19	1	1
Ընդամենը	112	112	50	51	11	11

Ընտրված աշխատողների հունվար, փետրվար և մարտ ամիսների աշխատավարձերի և պարգևատրումների ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և պարգևատրումները հաշվարկվել և վճարվել են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 03.07.2014թ. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության եվ փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը եվ վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 710-Ն որոշման, ՀՀ կառավարության 03.07.2014թ. «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական եվ փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը եվ կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշման և ՀՀ ոստիկանության պետի 11.09.2019թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողների (աշխատողների)

պարգևատրում տալու կարգը և չափերը (ցուցիչները) հաստատելու և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի մարտի 21-ի թիվ 3-Լ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 21-Լ հրամանի պահանջներին համապատասխան:

2021 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրերի կատարման համար ՀՀ ոստիկանությունը մարտի 31-ի դրությամբ կնքել է գումարային 7,556,709.1 հազ. դրամի պայմանագրեր: Հաշվեքննության ենթարկված առանձին ծրագրային միջոցառումների կատարման համար ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների գնման համար կնքված պայմանագրերը ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության պայմանագրեր

հազ. դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	Առաջին եռամսյակի վճարում
«ՖԼԵՇ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-2021-ՃՈ/ՎԱՌԵԼԻՔ-9	111,400.0	111,400.0
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-2021-ՈՍ-1-ՎԱՌԵԼԻՔ/ՊՐԵՄ-27	8,136.0	2,160.0
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՈՍ-1-ԴԻԶ-28	4,050.0	1,012.5
«Արպանիվ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՎՏՈ/ՄԱՍԵՐ/2021/ՈՍ-13-1	42,385.2	10,596.3
«Արիկո-Գոռ» ՓԲԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՏՊԱՐԱՆ-13-2	28,039.4	4,054.3
«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԹՈՒՂԹ/2021/ՈՍ-12	24,439.0	3,934.7
Ընդամենը		**218,449.6**	**133,157.8**

Հաշվեքննության են ենթարկվել «Տրանսպորտային նյութեր» և «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածներով ՀՀ ոստիկանության կողմից կնքած հետևյալ պայմանագրերը.

- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառման շրջանակում ՀՀ ոստիկանությունը «Ֆլեշ» ՍՊԸ հետ 2020 թվականի դեկտեմբերի 10-ին կնքել է 111,400.0 հազ. դրամի պայմանագիր՝ 400000 լիտր ռեգուլյար տեսակի բենզին գնելու համար, 1 լիտրը՝ 278.5 դրամով: 2021 թվականի մարտի 1-ին կազմված երկու հանձնման ընդունման արձանագրություններով պայմանագրի գնման ժամանակացույցին համապատասխան բենզինը

մատակարարվել է ամբողջությամբ և ՀՀ ոստիկանությունը վճարել է ընկերությանը 111,400.0 հազ. դրամ:

- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակում ՀՀ ոստիկանությունը «Սիփիէս Օիլ» ՍՊԸ հետ 2021 թվականի փետրվարի 25-ին կնքել է 8,136.0 հազ. դրամի պայմանագիր՝ 24000 լիտր պրեմիում տեսակի բենզին գնելու համար, 1 լիտրը՝ 339 դրամով: 2021 թվականի մարտի 5-ի հանձնման ընդունման արձանագրությունով պայմանագրի գնման ժամանակացույցին համապատասխան բենզինը մատակարարվել է ամբողջությամբ: ՀՀ ոստիկանությունը վճարել է ընկերությանը 2,160.0 հազ. դրամ, և 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմել է 5,976.0 հազ. դրամ:
- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակում ՀՀ ոստիկանությունը «Սիփիէս Օիլ» ՍՊԸ հետ 2021 թվականի փետրվարի 12-ին կնքել է 4,050.0 հազ. դրամի պայմանագիր՝ 15000 լիտր դիզելային վառելիք գնելու համար, 1 լիտրը՝ 270 դրամով: 2021 թվականի փետրվարի 17-ի հանձնման ընդունման արձանագրությունով պայմանագրի գնման ժամանակացույցին համապատասխան դիզելային վառելիքը մատակարարվել է ամբողջությամբ: ՀՀ ոստիկանությունը վճարել է ընկերությանը 1,012.5 հազ. դրամ, և 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմել է 3,037.5 հազ. դրամ:
- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակում ՀՀ ոստիկանությունը «Արպանիվ» ՍՊԸ հետ 2021 թվականի փետրվարի 8-ին կնքել է 42,385.2 հազ. դրամի անվադողերի և մարտկոցների գնման պայմանագիր: 2021 թվականի մարտի 9-

ին և 19-ին կազմված հանձնման ընդունման երեք արձանագրություններով պայմանագրի գնման ժամանակացույցին համապատասխան մատակարարվել է 14,548.4 հազ. դրամի անվադողեր: ՀՀ ոստիկանությունը վճարել է ընկերությանը 10,596.3 հազ. դրամ, և 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմել է 3,952.1 հազ. դրամ:

- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակում ՀՀ ոստիկանությունը «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ հետ 2021 թվականի հունվարի 27-ին կնքել է 24,439.0 հազ. դրամի պայմանագիր՝ 38792 կգ A4 ֆորմատի թուղթ գնելու համար, 1 կգ՝ 630 դրամով: 2021 թվականի մարտի 31-ին կազմված երկու հանձնման ընդունման արձանագրություններով պայմանագրի գնման ժամանակացույցին համապատասխան մատակարարվել է 5,539.0 հազ. դրամի 8792 կգ A4 ֆորմատի թուղթ: ՀՀ ոստիկանությունը վճարել է ընկերությանը 3,934.7 հազ. դրամ, և 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմել է 1,604.3 հազ. դրամ:
- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակում ՀՀ ոստիկանությունը «Արիկո-Գոռ» ՓԲԸ հետ 2021 թվականի փետրվարի 2-ին կնքել է 28,039.4 հազ. դրամի պայմանագիր 5 անվանում տարբեր տեսակի թուղթ գնելու համար: 2021 թվականի մարտի 15-ին և 16-ին կազմված երկու հանձնման ընդունման արձանագրություններով պայմանագրի գնման ժամանակացույցին համապատասխան մատակարարվել է 5,746.4 հազ. դրամի թուղթ: ՀՀ ոստիկանությունը վճարել է ընկերությանը 4,054.3 հազ. դրամ, և 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմել է 1,692.1 հազ. դրամ:

ՀՀ ոստիկանության ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀՀ պետական բյուջեի տնտեսագիտական

դասակարգման առանձին հոդվածներով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված ծախսերը չեն կատարվել, մասնավորապես.

- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակում 2021 թվականի առաջին եռամսյակի համար «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով ճշտված պլանով նախատեսված 64,065.0 հազ. դրամի ծախսերը: ՀՀ ոստիկանությունը հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կնքել է մեկ պայմանագիր՝ 65,000.0 հազ. դրամ արժեքով:
- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակում 2021 թվականի առաջին եռամսյակի համար «հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածով ճշտված պլանով նախատեսված 123,658.1 հազ. դրամի ծախսերը: ՀՀ ոստիկանությունը հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կնքել է ութ պայմանագրեր՝ 37,592.8 հազ. դրամ ընդհանուր արժեքով:
- «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման շրջանակում 2021 թվականի առաջին եռամսյակի համար «տրանսպորտային նյութեր» հոդվածով ճշտված պլանով նախատեսված 49,239.8 հազ. դրամի ծախսերը: ՀՀ ոստիկանությունը հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կնքել է երեք պայմանագրեր՝ 3,206.6 հազ. դրամ ընդհանուր արժեքով:
- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառման շրջանակում 2021 թվականի առաջին եռամսյակի համար «համակարգչային ծառայություններ» հոդվածով ճշտված պլանով նախատեսված 28,100.0 հազ. դրամի ծախսերը: ՀՀ ոստիկանությունը հոդվածով նախատեսված միջոցների

հաշվին 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ կնքել է երկու պայմանագրեր՝ 34,800.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

- «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման շրջանակում 2021 թվականի առաջին եռամսյակի համար «կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածով ճշտված պլանով նախատեսված 21,342.0 հազ. դրամի ծախսերը:
- «ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում» միջոցառման շրջանակում 2021 թվականի առաջին եռամսյակի համար «այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով ճշտված պլանով նախատեսված 258,008.0 հազ. դրամի ծախսերը:
- «Ոստիկանության բաժանմունքների շենքային պայմանների բավարարում» միջոցառման շրջանակում 2021 թվականի առաջին եռամսյակի համար «նախագծահետազոտական ծախսեր» հոդվածով ճշտված պլանով նախատեսված 30,900.0 հազ. դրամի ծախսերը:

Ընդ որում, վերջին երկու դեպքում՝ կապիտալ ծախսեր հանդիսացող «այլ մեքենաներ և սարքավորումներ» ու «նախագծահետազոտական ծախսեր» հոդվածներով 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ պայմանագրեր կնքված չեն:

Փաստորեն, պետական բյուջեով նախատեսված առանձին միջոցառումների մասով՝ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 30.12.2020թ. թիվ 2215-Ն որոշման հավելված 4-ի եռամսյակային համամասնություններով հաստատված ծախսերը ՀՀ ոստիկանության կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում կատարվել են թերի:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված 2021 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների ցուցանիշները համադրվել

են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finance և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ, անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն արձանագրվել:

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ և բացատրություններ չունի:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն: